

ԿԱՐԾԻՔ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻ «ՉԱՐ ՈԳԻՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ. ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ» ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Հասմիկ Գալստյանի «Չար ոգիները հայ ժողովրդական գրույցներում. տեսակների դասակարգումն ըստ գործառույթների» ատենախոսությունը նվիրված է հայ ժողովրդական գրույցներում առկա ստորին առասպելաբանական կերպարների ուսումնասիրությանը, դրանց խմբավորման և դասակարգման խնդիրներին:

Ելնելով քննության առարկա դարձրած նյութի՝ ստորին առասպելաբանական կերպարների տարողունակությունից՝ ատենախոսն իր ուսումնասիրության համար վերցրել է միայն չար ոգիների մասին եղած նյութերը և դրանց հենքի վրա էլ պատրաստել իր գիտական աշխատանքը:

Իր հետազոտությունը գրելու համար ատենախոս Հասմիկ Գալստյանը տպագիր և անտիպ հարուստ աղբյուրներից (սնահավատական գրույցներ, ավանդազրույցներ, հեքիաթներ, աղոթքներ, հանելուկներ, անեծքներ, առած-ասացվածքներ, հավատալիքներ, դարձվածային արտահայտություններ, բանաձևային նմուշներ և այլն), ինչպես նաև անձնական գրառումներից առանձնացրել է չար ոգիներին առնչվող նմուշները, նույնականացման սկզբունքով խմբավորել ոգիների անունների հայտնի և բարբառային տարբերակները, բնութագրել և որոշել ստորին առասպելաբանական կերպարների տեղը հայկական դիվարանում, ոգիների անունների ծագման ու առաջացման հարցերը պարզելու նպատակով կատարել ստուգաբանական աշխատանք, որոշել ոգիների և դրանց հետ կապված հավատալիքների տարածվածությունն ու աշխարհագրական ընդգրկումը, համեմատել չար ոգիների գործառույթներն այլ ժողովուրդների գրույցներում ու հավատալիքներում առկա նմանատիպ կերպարների հետ՝ ներկայացնելով նաև վիպական բանահյուսության այս տեսակի վերաբերյալ այլոց և իր մտեցումները:

Հասմիկ Գալստյանի ատենախոսությունը բաղկացած է հինգ գլուխներից, եզրակացություններից և հավելվածից:

Ատենախոսության **առաջին գլխում** հեղինակը ներկայացնում է վիպական բանահյուսության գրույցի տեսակը, անդրադառնում հայ և օտարազգի բանագետների տեսակետներին, դրանց տրված գիտական և ժողովրդական անվանումներին՝ մանրակրկիտ կանգ առնելով գրույցի վերաբերյալ հայ բանագետ-ժողովրդագետների անդրադարձների

և արտահայտած կարծիքների վրա, անշուշտ, մատնանշելով նաև ատենախոսության մեջ ստորին առասպելաբանական կերպարների դասակարգման իր սկզբունքները:

Իր ուսումնասիրության **երկրորդ գլխում** ատենախոսն անդրադարձել է հայկական դիվարանի հայտնի կերպարներից երկուսին՝ **դևերին** և **սատանային**:

Հայ ժողովրդական զրույցներում առկա նյութերի փաստարկմամբ՝ Հ. Գալստյանը ներկայացնում է դևերի պատճառով մարդու «ձեռք բերած» ոչ միայն ցավերն ու հիվանդությունները, այլև դրանց ժողովրդական բուժումները:

Առասպելական սատանայի մասին խոսելիս ատենախոսը, հայոց դիվարանին գուգահեռ, անդրադառնում է մի շարք ժողովուրդների շրջանում տարածված սատանայի կերպարներին, տալիս ոչ միայն «սատանա» բառի ծագման երբայական սկզբնաղբյուրը, «որը նշանակում է ոսոխ, հակառակորդ, թշնամի, հակառակ դիմակաց, չար ոգի, դև», այլև Աճառյանի «օգնությամբ» ներկայացնում փոխառությամբ տարածված դրա ասորերեն, ռուսերեն, արաբերեն (շայթան), եթովպերեն, հունարեն, լատիներեն, հարավսլավերեն և գերմաներեն ձևերը: Այնուհետև ռուս բանագետ Պոմերանցևայի «վկայությամբ» փաստում ռուսական զրույցներում պատմվող հրեշտակների անկման, աշխարհի և մարդու արարման գործում Աստծո և սատանայի մրցակցության, Աստծո զայրության, Միքայել հրեշտակապետի օգնությամբ սատանային վտարելու և այլնի մասին:

Հայաստանի ազգագրական մի շարք շրջաններում սատանային տրվող տարատեսակ անվանումների ու բազմաթիվ գործառույթների մատնանշմամբ, դրանց մեկնաբանմամբ, ինչպես նաև սատանային վերագրվող տարատեսակ առասպելատիպ զրույցների մեջբերմամբ՝ ատենախոսը հիմնավորում է հայոց մեջ առասպելական այդ կերպարի արտաքինի նկարագրությունը և բնորոշ հատկանիշները, խոսում նրա սեռի և տարիքի խնդրի, բնակության վայրի, կենցաղի, կերպարանափոխության, ինչպես նաև մարդկանց կողմից սատանաներին բռնելու տարբերակների, եղանակների ու պաշտպանական և խափանման միջոցների մասին:

Ատենախոսության **երրորդ գլխում** Հ. Գալստյանը ներկայացնում է ծննդկանին ու նորածնին վնասող և մարդկության բազմացմանը խոչընդոտող չար ոգիներին, որոնք հայոց շրջանում հանդես են գալիս տարատեսակ կերպարներով ու անուններով՝ «ալ», «թպղա» կոչվող դև, օրորոցագող (տուր, սև տուր, զարկս, ջաջ, ծագ) և մանկասաստ ոգիներ (մեշոկ պապ, բոբոլ կամ արջաբոբոլ, բրդղըլավաշ, ուվա, խօխ կամ խօխօն):

Ներկայացնելուն զուգահեռ՝ մի շարք տարածաշրջաններից գրառված զրույցների միջոցով ատենախոսը տալիս է նաև նրանց հիմնական գործառույթներն ու դրանցից պաշտպանվելու ժողովրդական, այսպես ասած, «բուժամիջոցները»:

Ատենախոսության **չորրորդ գլուխն** այնպիսի չար ոգիների մասին է, որոնք առնչվում են ժողովրդական տոմարին: Ատենախոսը ձեռքի տակ եղած նյութերից առանձնացրել է տոմարային չար ոգի **շվոտին**՝ կերպարը քննելով *Տեսնորնդառաջի* և մասամբ *Ամանորի* տոների համատեքստում՝ փաստելով, որ այդ չար ոգու հավատալիքը բնորոշ է միայն հայ ժողովրդի հավատալիքային համակարգին և հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր պատմագագազրական շրջաններում առկա ժողովրդական զրույցներում:

Նավասարդի տոնի ժամանակ կատարվող բերքահավաքի համատեքստում Հ. Գալստյանը քննության է առնում ժողովրդական զրույցներում հանդիպող *Խլվիկ-խիպիլիկի* հավատալիքը՝ որպես քնած մարդկանց մարմինը վնասող չարքի կամ երագմդավանջի ոգու կերպար:

Ատենախոսության **հինգերորդ գլուխը** նվիրված է հայ ժողովրդական զրույցներում և հավատալիքներում հանդիպող ջրի ու անտառների ոգիներին և ուրվականներին՝ (փերիներ, հավերժահարսներ, ջրանույշներ, հրեղեն աղջիկներ, ջրի աղջիկներ, երկնքի աղջիկներ, փերի ոգիներ, հնարքներ, ջրի պառավներ), որոնք հանդես են գալիս **փերիներ** ընդհանուր անվան տակ:

Հայկական զրույցներում մեռելների հոգիների կերպարանափոխված, ուրվական դարձած արարածներին ժողովուրդն անվանում է **գոռնափշտիկ**, խորթլախ կամ գոռնադաբ: Գոռնափշտիկ դառնում են անգութ և բռնակալ մահմեղականները, որոնք գերեզմանից մերկ ու այլանդակ կերպարանքով դուրս են գալիս և թափառում այս ու այն կողմ: (տե՛ս էջ 89):

Ի դեպ, սույն ուսումնասիրությունում չար ոգիների որոշ կերպարներին անդրադառնալիս ատենախոս Գալստյանը չի բավարարվում միայն հայկական հարուստ սկզբնաղբյուրները մեջբերելով: Նա ասելիքը էլ ավելի հիմնավոր և հավաստի դարձնելու համար ներկայացնում է նաև թե՛ հարևան ժողովուրդների, թե՛ տարածաշրջանից դուրս գտնվող այլ ժողովուրդների հավատալիքային դրսևորումները՝ իբրև որոշակի ժամանակահատվածում նույնակերպ մտածողության արգասիք:

Այսպես, օրինակ, **Ալ(ք)**-ի հավատալիքի մասին խոսելիս ատենախոսը գրում է. «*Ալի հավատալիքն ունի հնագույն ակունքներ և լայնորեն տարածված է ոչ միայն Հայաստանի*

ազգագրական գրեթե բոլոր շրջաններում, այլև քրիստոնյա և մահմեդական շատ ժողովուրդների հավատալիքներում (Իրան, Միջին Ասիա, Կովկաս, Ռուսաստան և այլն): Ամենուր նույնն են կամ չափազանց նման ոգու թե՛ արտաքին նկարագրությունն ու գործառույթները և թե՛ նրանից զգուշանալու կամ պաշտպանվելու ժողովրդական միջոցներն ու եղանակները»: (տե՛ս էջ 89):

Հենվելով հայ և օտարազգի ժողովրդագետների աղբյուրների վրա՝ Գալստյանը ներկայացնում է նաև տարբեր ժողովուրդների հավատալիքներում «ալ» ոգու նույնարմատ անունները՝ ալբաստի (տաջիկներ), ալ նաբ (լեզգիներ), ալի (վրացիներ), ալա ժեն (թալիշներ), հալ (ուդիներ), ալք (քրդեր), ալմազի (ինգուշներ, չեչեններ), ալմաս (մոնղոլական ժողովուրդներ), ալբաստ, ալվաստի (Կազանի, Ղրիմի թաթարներ, բաշկիրներ, ուզբեկներ) և այլն: (տե՛ս էջ 77-78):

Ատենախոսը նույն սկզբունքն է կիրառում «ղև» բառի ստուգաբանությունը մատուցելիս (տե՛ս էջ 30-31)՝ մեջբերելով նաև իրանագետ Գառնիկ Ասատրյանի տեսակետը. «*ալը կամ ալբաստին (ծննդկանին վնասող դիվուհի) և դևը, որոնք վկայված են համարյա բոլոր եվրասիական և առաջավորասիական ժողովուրդների բանահյուսության մեջ, իրանական ծագում ունեն*»: (տե՛ս էջ 78):

Հ. Գալստյանը նույն կերպ է վարվում նաև հայոց և այլ ժողովուրդների շրջանում որոշ չար ոգիներին տրված անունները քննարկելիս. «*Մատանա*» բառը ծագում է հին եբրայերեն *satan* բառից, Փոխառությամբ տարածված է մի շարք լեզուներում՝ ասորերեն՝ *sātana*, ռուսերեն՝ *сатана*, արաբերեն՝ *šaytan* (շայթան), եթովպերեն՝ *sadatan*, հունարեն՝ *Satanas*, լատիներեն՝ *satanas*, հարավսլավերեն՝ *sotona*, գերմաներեն՝ *satan* և այլն:» (տե՛ս էջ 53):

Կամ էլ **փերիներ** ընդհանուր անվան տակ հանդես եկող ջրի և ուրվականի ոգիներին ներկայացնելիս տրվում է **փերի** բառին առնչվող Ստ. Մալխասյանցի մեկնաբանությունը. «**Փերի** բառը *փոխառնված է պահլավերեն parik* բառից, որ նշանակում է չար ոգի, սատանայի էգ: Սոգդիերենում և պարսկերենում՝ **parik, pari**, նշանակում է հավերժահարս, աննման գեղեցկությամբ բարի ոգի, փերի, իսկ գենդերենում **parikā**-ն կախարդ կինն է»: (տե՛ս էջ 139):

Հայ առասպելաբանության մեջ և Աստվածաշնչում հիշատակվող հուշկապարիկին անդրադառնալիս ևս ատենախոսը Ղևոնդ Ալիշանի «օգնությամբ» այն ներկայացնում է իբրև պահլավական-իրանական փոխառություն: (տե՛ս էջ 139):

Ուշագրավ և տարատեսակ մասնագետների, ինչպես նաև ուսանողների համար անչափ օգտակար ու կիրառելի արժեք է ներկայացնում Հ. Գալստյանի ատենախոսության «Հավելված»-ը, որի բաժիններում ատենախոսը ներկայացրել է թե՛ դաշտային աշխատանքների ժամանակ իր գրանցած գրույցները, թե՛ բանահյուսական և ազգագրական տարատեսակ ժողովածուներից դուրս գրված չար ոգիների մասին բանահյուսական տեքստերը (աղոթքներ, խաղիկներ, անեծք, երգում, առած, ասացվածք):

Չափազանց օգտակար է նաև չար ոգիների անունների բառարանը՝ կազմված բարբառային տարբերակների, տարատեսակ գործառույթների, արտաքին տեսքի նկարագրությունների, հատուկ անունների և հարուցած հիվանդությունների ցանկերով:

Ատենախոսության հանգամանալից ծանոթությունը բերում այն համոզման, որ Հասմիկ Գալստյանը, առաջին անգամ հայ բանագիտության մեջ գիտական շրջանառության մեջ դնելով «ստորին առասպելաբանություն» եզրույթը (մինչ այս՝ ուսումնասիրվող թեման դիտարկվել ու քննվել էր որպես «սնահավատական գրույց»), չար ոգիների մասին հայ ժողովրդական գրույցների հարուստ շտեմարանը ի մի բերելով, դասդասելով, ըստ կերպարների և գործառույթների քննարկելով ու համադրելով, կարողացել է պատվով կատարել իր առջև դրված խնդիրը:

Այժմ ներկայացնենք ատենախոսությանն առնչվող մի քանի դիտարկում.

- ա. Հասմիկ Գալստյանի ատենախոսությունում առկա են կետադրական սխալ-բացթողումներ (էջ 5, 19, 40, 60, 74, 195), համակարգչային շարվածքի վրիպակներ (էջ 9, 16, 42, 47), բառակրկնություններ (էջ 12, 49),
- բ. Ատենախոսությունում երբեմն մատնանշված սկզբնաղբյուրը փոխանակ տողատակ իջեցվի, այն նշվում է շարադրանքի մեջ, ինչը չի խրախուսվում (էջ 18, 27):
- գ. Հավելվածում ներկայացված բանահյուսության տեքստերի մեջ առած-ասացվածքների և անեծքների հետ տրված են կա՛մ ժողովրդական դարձվածքներ, կա՛մ այլ բնույթի ասույթաբանական նմուշներ (էջ 194-197):

Այս ամենով հանդերձ՝ ներկայացված դիտարկում-բացթողումներն ամենևին չեն ստվերում ատենախոս Հասմիկ Գալստյանի կատարած հսկայածավալ ու ծանրակշիռ աշխատանքը, և մի շարք գիտաճյուղերի մասնագետների համար կիրառական արժեք ներկայացնող այս հետազոտությունը առաջիկայում գրքի տեսքով հրատարակելիս դրանք անշո՛ւշտ կշտկվեն:

Հասմիկ Գալստյանի «Չար ոգիները հայ ժողովրդական գրույցներում. տեսակների դասակարգումն ըստ գործառույթների» ատենախոսությունը՝ շարադրված գիտական խոսքի հստակ դիտարկումներով և ձևակերպումներով, լիովի բավարարում է գիտության թեկնածուի աստիճանին առաջադրվող պահանջները, իսկ հեղինակը միանգամայն արժանի է հայցած աստիճանին, որի համար միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող գիտական խորհրդին:

Պաշտոնական ընդդիմախոս,

բանասիրական գիտությունների դոկտոր՝

Արմեն Շ. Սարգսյան

Ստորագրությունը հաստատում եմ՝

պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ի փոխտնօրեն՝

Արսեն Բոբոխյան

6.12.2021թ., Երևան

